






Թ Փ . Ա . Բ ՈՒԹ Ա Խ Վ Ե Ե Ն

Խ 8.

Ս Ի Ֆ Ի Լ Ի Ո

Երկրորդ լրացրած հրատարակութիւն



Թ Փ Ի Ֆ Լ Ի Ո

Ա. Մարտիրոսիանցի տպարան || Տիպ. Կ. ՄԱՐՏԻՐՈՍԻԱՆЦԱ .
Օքելյանովսկայ գլ. հ. № 1|2.

1900

16444

Дозволено Цензурою. С. Петербургъ 30-го Мая 1900 г.



36-2008

Որոշ պայմաններում սիֆիլիսը կարելի է
բժշկել:

Հիւանդի երկիւղն ու յուսահատութիւնը կա-
րող են դանդաղեցնել կանոնաւոր բժշկութիւնը:

Բժշկի օգնութիւնը դժբաղդ հիւանդի նե-
ցուկն է, որով նա կիմանայ ճշմարտութիւնը և
կկարողանայ հոգալ իր առողջութեան մասին:

Իսկ ինքնահոգացողութիւնը նախազգուշաց-
ման և հիւանդութեան դէմ կռուելու ամենաաղ-
դու միջոցներից մէկն է:

Յ Ե Ւ Ա Զ Ե Բ Ե Ն

Գրքոյիլիս նպատակն է հասարակութեանը ծանօթացնել սիֆիլիսի էռթիւնն ու նշանակութիւնը:

Այս հիւանդութիւնը մտել է աշխարհիս ամեն մի անկիւնը, օրի վրայ աւելի զոհեր է տանում և նիւթական, Փիզիքական ու բարոյական ահագին կորուստներ է հասցնում մարդկութեան:

Սիֆիլիսի դէմ կուռելու ամենազլիսաւոր դէնքը լուսաւորութիւնն է, որին վաղուց հարկաւոր էր դուրս դալ նեղ ու կաշկանդուած շրջանակներից, ինչպէս որ մեղ մօտ է:

Միայն այդ շաւզով կարելի կլինի ժողովրդի մէջ տարածել առողջապահական պարզ գաղափարներ և նրան հասկացնել, թէ նախազգուշական միջոցներն ու բժշկուելն անհրաժեշտ են:

Այս զրքոյկը կարող է համեստ ծառայութիւն մատուցանել հիւանդներին և ժողովրդի այն բարեկամներին, որոնք կըցանկանան մօտիկից ճանաչել հիւանդութիւնը՝ հետը զիտակցաբար կուռելու համար:

Թող սա համակրական ընդունելութիւն գտնէ նոցա սրտի մէջ. թող նոքա, տարածելով զրքոյկիս բովանդակութիւնը ժողովրդի ստուար խաւերում, աշխատակից լինին ժողովրդի անմշակ անդաստանում ուղիղ գաղափարներ տարածելու գործին:

Բժ. Ա. Բաբուռնէան

Ա. Պետերբուրգ 1900 թ.

Պատմական տեսութիւն

Թէ առաջին անգամ երբ երեցաւ սիՓիլիսը,
դժուար է ճշտօրէն որոշել:

Ոմանք կարծում են, թէ այդ հիւանդութիւնը
մեզ մօտ են բերել Քրիստափոր Կոլումբի նաւորդներն
Ամերիկայի գիւտից յետով. միւսները՝ թէ սիՓիլիսը
Մաւրիտանացիներն են տարածել, երբ Սպանիալից
դուրս քշուեցան:

Սակայն բժիշկ-պատմաբանների մեծամասնու-
թիւնն այժմ այն կարծիքին է, թէ սիՓիլիսը նոյն-
քան հինաւուրց հիւանդութիւն է, որքան և մարդ-
կային ցեղը:

Իրեւ ապացուց այս վերջին կարծիքի՝ մենք
գտնում ենք մի քանի հին գրականութիւնների մէջ
հիւանդութեան այնպիսի նկարագրութիւններ, որ
կարելի է միայն սիՓիլիսին յատկացնել:

Օրինակ, Բահաղին երկրպագող երրայեցիներին
իրեւ պատիժ ուղարկուած հիւանդութիւնն անշուշտ
սիՓիլիս էր:

Ճապոնական հին գրականութեան մէջ կայ այդ
հիւանդութեան լիակատար նկարագրութիւնը:

Իւվենալ, Մարցիալ, Դիոն Խրիզոստոմ տալիս
են իրանց ժամանակակից չոռվմի մէջ եղած մէկ

Հիւանդութեան մանրամասն նկարագրութիւն, որից առանց տարակուսելու կարելի է եղրակացնել, թէ այդ հիւանդութիւնը սիֆիլիսն է եղել:

Բայց միայն XV դարի վերջերում բժիշկներն սկսում են ուշադրութիւն դարձնել սիֆիլիսի վրայ, որն այն ժամանակուայ անընդհատ պատերազմների, իւաչակիր արշաւանքների, ուխտագնացութեան և ոչ պակաս փչացած բարքերի պատճառով սկսում է արագութեամբ տարածուել ամբողջ Եւրոպայում՝ ըրինայելով ոչ սեռ, ոչ հասակ, և ոչ դիրք:

Այդ հիւանդութիւնը զանագան անուններ էր կրում, նայելով թէ ով ումից էր ստացել: Նա անուանվում էր սպանիական, իտալական, գաղղիական, իսկ մեր ժողովրդի մէջ յայտնի է քիֆթ կամ ֆոէնկ անունով:

«Սիֆիլիս» անունն առաջին անգամ գտնում ենք 1530 թուին՝ վերոնացի Փիրոլամօ Ֆրակաստօր բժշկի գրած մի ոտանաւորի մէջ, ուր պատմվում է, թէ Սիֆիլիս անունով մէկ հովիւ իւր շնութեան կամ անհաւատութեան համար այս հիւանդութիւնն ստացաւ:

Արդ՝ միայն այդ ժամանակից սկսած սիֆիլիսն յուղել է բժիշկների մտքերը: Բայց ստոյդ տեղեկութիւնների և հետազօտութեան դիտական մեթուսների բացակայութեան շնորհիւ՝ սիֆիլիսն յաճախակի շփոթում էին միւս հիւանդութիւնների, մանաւանդ սուսունակի և կակուղ շանկրի հետ:

Թէ ի՞նչ է այդ հիւանդութիւնը՝ այս խնդրի նկատմամբ բազմաթիւ կարծիքներ արտայալտուեցան,

զանազան շկոլաներ երևցան, գրուեցան ամփոփ շարադրութիւններ. գիտութեան շատ հերոսներ անձնանուիրաբար պատուաստում էին իրանց այս հիւանդութիւնը, որ կարելի լինի հետազօտել, և այսպէս միայն կամաց-կամաց, քայլ առ քայլ ճիշտ դաղափարներ գոյացան սիֆիլիսի բնութեան մասին:

Բիկօր, Վիրխով, Ֆուրնիէ և այլ գիտնականներ, որոնց հետազօտութիւնները պարզութանում են սիֆիլիսին վերաբերեալ հակասական վարդապետութիւնների ու փրածերի քաօսը, անմահացրել են իրանց անունները մարդկութեան մէջ:

Նրանց աշխատութիւնների շնորհիւ սիֆիլիսի ուսումնասիրութիւնն ալժմ կանգնած է իրական հիմունքների վրայ:

Վաղուց արդէն պարզած է, որ սիֆիլիսն ընդհանուր ոչինչ չունի վեներական ախտերի՝ սուսունակի և փափուկ շանկրի հետ: Սխալվում են այն մարդիկ, որոնք կարծում են, թէ փափուկ շանկրը կարող է դառնալ պինդ շանկր կամ սուսունակը — սիֆիլիս:

Այդ թիւրիմացութեան առաջն առնելու համար հարկաւոր է ի նկատի ունենալ, որ փափուկ շանկրը երևում է վերջին մերձաւորութիւնից միջին հաշուով երեք-հինգ օր յետոյ, իսկ պինդ շանկրը՝ երկու-երեք շաբաթից յետոյ:

Բացի այդ երկու տեսակից կայ և մի ուրիշ տեսակ շանկր, որը մի տեսակ խառնուրդ է առաջինի և երկրորդի, այսինքն հիւանդն ունեցել է միւնոյն ժամանակ և փափուկ շանկր և սիֆիլիս, որոնցից առաջները է խառն շանկրը:

Ինչպէս յայտնի է, սուսունակի ժամանակ միդանցուկից հոսում է թարախ, մաղաս. բայց եթէ հինգ-վեց շաբաթից յետոյ մարմնի վրայ երեսում են սիֆիլիսի խոցեր, դա ցոյց է տալիս, որ հէնց սկզբից միզանցուկի մէջ եղել է պինդ շանկրի խոց, որը կարող է աննկատելի լինել: Հետեւապէս հիւանդը միաժամանակ ստացել է և սուսունակ, և սիֆիլիս և շանկր:

Կերկարումս փափուկ կամ վեներական շանկրը կոչվում է ուղղակի շանկր, իսկ պինդ շանկրը՝ սկզբնական սիֆիլիտիկական խոց:

Այդ խոցը որոշ կարծրութեան հասնելիս կոչւմ է սկլերոզ:

¶.

Սիֆիլիսի էութիւնն ու վարակման
ձանապարհները

Սիֆիլիսը վարակիչ հիւանդութիւն է և նրա սկզբնապատճառը մի տեսակ թոյն է: Այդ թոյնը, վարակուած տեղից անցնելով արեան մէջ, առաջացնում է ընդհանուր հիւանդութիւն:

Գիտնականների մեծամասնութիւնն այն կարծիքն ունի, թէ սիֆիլիսի թոյնը բաղկացած է յատուկ միկրոբից և նրա արտադրած հիւթերից:

Բայց ինչպէս միկրոբը, այնպէս էլ նորա արտադրած տոկսինը (թոյնը) մինչև այժմ դեռ չեն գտնուած:

Իւր վարակիչ բնաւորութեան շնորհիւ սիֆիլիսն անցնում է հիւանդ օրգանիզմից առողջին, բայց միմիայն անմիջական հպման ճանապարհով և ոչ թէ տարածութեան միջոցով, այսինքն՝ նա օդով անցնելու յատկութիւն չունի, ինչպէս միազմները:

Սիֆիլիսի վարակումը կատարվում է երեք ճանապարհով՝ սեռական մերձաւորութեան, ոչ-մերձաւորութեան և ժառանդականութեան միջոցով:

Սեռական անդամների միջոցով սիֆիլիսը կարող է մէկից միւսին անցնել մերձաւորութեան ժամանակ, նոյն իսկ առողջ անհատներից, որոնք սակաւ մի առաջ սեռական յարաբերութիւն են ունեցել սիֆիլիտիկի հետ:

Ոչ-մերձաւորութեան ճանապարհով վարակումը կարող է առաջ գալ համբոյրների, ծիծ տալու, ծաղիկ պատուաստելու, սափրուելու, դրամի, խաղալիքների, գործարաններում, արհեստանոցներում և այլ տեղերում բանեցրած գործիքների միջոցով, երբ այդ իրերը գործածել են հիւանդները՝ սիֆիլիսով վարակուած շրջանում:

Քաղաքներում ու գիւղերում սիֆիլիսը տարածում են գաղտնի ու բացարձակ անառակութեամբ հիւրանոցների ու ճաշարանների ծառաները, բաղանիքներում ծառալողները, զինուորներն ու բանուորները՝ հայրենիք վերադառնալիս և վերջապէս ծըծմայրերն ու աղախինները:

Մեզանում սիֆիլիսն ահագին քայլեր է անում զանազան պատճառների շնորհիւ:

Աղքաբնակութեան մտաւոր զարդացման աստիճանը շատ ցածր է:

Ժողովուրդը գիւղերում իրար վրայ է կուտուած և կեղտոտ է ապրում, գործադրում է ընդհանուր աման, երեսսրբիչ. նա ծանօթ չէ հիւանդութեան իսկական յատկութիւններին, ուստի և ժամանակին չէ դիմում բժշկի օգնութեան, և վերջապէս՝ այդ օգնութեան պակասութիւնը—ահա այն պատճառները, որոնք արագութեամբ տարածում են սիֆիլիսը մեզ մօտ:

Բացի գիւղերից՝ այդ ախտը մտել է նոյնպէս վաճառաշահ կենտրոնները և ծովեղբեալ մեծ քաղաքները:

Աւելորդ չէ նկատել, որ մեծ յանցանք են գործում այն կանայք, որոնք մի որևէ բարեկամի կամ հարեւանի մօտ հիւր գնալիս, իրեւ մի առանցին սիրալիրութիւն, ծիծ են տալիս օտար երեխալի:

Այդ ճանապարհով նրանք հեշտութեամբ կարող են վարակել կամ վարակուել և ապա տարածել կորստաբեր հիւանդութիւնը:

Ուրեմն իւրաքանչիւր մայր իւր սրբազան պարտականութիւնը պիտի համարէ հեռու մնալ այդ սխալ քայլից, այսինքն ծիծ չտալ օտար երեխալինոյնիսկ ամենամօտիկ աղգականին:

¶.

Սիմիլիսով վարակուելու առաջին նշանները

Սիմիլիսով հիւանդանալու համար անհրաժեշտ
է հպումն ունենալ նոյն հիւանդութիւնն ունեցող
անհատի հետ. միևնույն ժամանակ մարդուս կաշու
կամ լորձաթաղանթի որևէ է մասը վնասուած պի-
տի լինի:

Ելապիսի պայմաններում վարակուողը սկզբում
ոչ մի առանձին բան չէ զգում կամ թէ ուշադրու-
թիւն չէ դարձնում յախոնի տեղում երևցած թեթև
զրգուման վրայ:

Գրգռուած տեղը սակաւ ժամանակից յետոյ կա-
րող է ջուր ժողովել և ուռչել: Ուռուցքի կենտրոնում
լինում է մէկ կարմիր բիճ:

Կամաց-կամաց այդ ուռուցքը պնդանում է, և
2—3 շաբաթից յետոյ նոյն իսկ անուշագիր հիւանդ-
ները նկատում են, թէ արդէն գոյացել է վէրք, որը
սկսվում է լորձաթաղանթի մակերեւոյթից և լինում
է տափակ, կոռ կամ ձուաձև, առանց ատամնաւոր
եղերքի, պղնձագոյն տակով, արտազրում է արենա-
ջրացին վարակիչ հեղուկ և շրջապատուած է լինում
բաց կարմիր երիզով:

Եթէ այդ ժամանակամիջոցին վէրքը շօշափենք,
կը նկատենք, որ նրա տակը պնդացել է, և այդ
պնդութիւնը խոցի սահմաններից չի անցնում:

Այս բնորոշ պնդութիւնը, որ միշտ յատուկ է

սիֆիլիսային վէրքերին, առիթ է տուել նրանց «պինդ շանկը» անուանելու:

Պինդ շանկը տակը հետզհետէ խորանում է և վէրքը ծածկվում է մոխրագոյն նիւթով, բայց դեղերի աղդեցութեամբ մաքրվում է. վէրքն սկսում է լըցուել և եզերքից վերնամաշկով ծածկուել—սկլերոզ դառնալ:

Պէտք է ի նկատի ունենալ, որ սիֆիլիսային վէրքը միշտ այս ձևով չէ զարգանում: Ճփման և դեղերի աղդեցութեան տակ նա այնպէս է կերպարանափոխվում, որ նոյնիսկ բժիշկները կարող են չը ճանաչել, ի հարկէ, միայն առժամանակ:

Միւս դէպքում սիֆիլիսային շանկը կարող է երեալ առանց վերոյիշեալ պնդութեան: Խոցի փոխարէն երբեմն գոյանում է մի հասարակ ճեղք կամ քերուած: Երբեմն հէնց սկզբից կարող է երեալ մէկ բշտիկ կամ թէ աւշային անօթների բորբոքումն՝ վարակման տեղում, առանց խոցի:

Ահա սիֆիլիսի բազմատեսակ սկզբնական երեւութները, որոնց ճանաչելը շատ դժուար է:

Հիւանդութեան առաջին նկատելի երեւութը սիֆիլիսային շանկըն է, որը առհասարակ երեան է գալիս զանազան տեղերում, նայելով թէ ինչ ճանապարհով է սիֆիլիսն ստացուած. եթէ սեռական մերձաւորութեան՝ այն ժամանակ սեռական անդամների վրայ. եթէ առանց մերձաւորութեան՝ շրթունքների, լեզուի, ձեռքերի, կրծքի և մարմնի այլ մասերի վրայ. արուագիտութեան դէպքում՝ ուղիղ աղիքի լորձաթաղանթի վրայ:

Սիֆիլիսային շանկըն երևում է, ինչպէս ասացինք, վարակման ըոպէից երկու-երեք շաբաթ անցած։ Այդ ժամանակամիջոցը կոչվում է «առաջին շրջան» և գործնական մեծ նշանակութիւն ունի սիֆիլիսը կակուղ շանկըից որոշելու (այս վերջինն երեան է գալիս Յ-դ կամ Ծ-դ օրը), վարակման բուն պատճառն իմանալու, ծծմալը գտնելու և այլ սրա նման դէպքերի նկատմամբ։

Պինդ շանկը կակուղից որոշելուն օգնում են մերձակայ աւշային անօթների և գեղձերի փոփոխութիւնները, որոնք իսկոյն երևում են, երբ վէրքի արմատը պնդանում է. այդ ժամանակ աւշային անօթները լարի պէս ձգվում են և շօշափելի են դառնում կաշու տակից՝ անդամի արմատի մօտ (եթէ պինդ շանկը անդամի վրայ է լինում)։ այդ լարն ուղղուած է լինում դէպի մօտակայ աճուկային գեղձերը (լիմֆանգօխտ)։

Աւշային գեղձերը նոյնպէս ուռչում են, մեծանում, շարան-շարան համրիչի ձև ստանում՝ զլիսառապէս աճուկային շրջանում (լիմֆադէնիտ)։

Այդ ուռուցները չեն ցաւում։

Վէրքի հարևան գեղձերի ուռչելուց յետոյ ըսկըսում են մեծանալ և միւսները՝ աղդրային, պարանոցային, ենթածնօտային, ծոծրակային, արմկային և այլ արտաքին զիւրամատչելի գեղձերը։

Գեղձերը մեծանում են և բորբոքվում սիֆիլիսային թոյնի աղդեցութեան տակ։

Այդ բորբոքումը դանդաղ կերպով է ընթանում, սակայն կողմնակի պատճառների աղդեցութեամբ կա-

լող է սուր կերպարանք ստանալ, և բուքոնք կա-
րող է բացուել:

Մի քանի ամիս անցնելուց յետոյ, դեղերի շնոր-
հիւ, հիւանդացած գեղձերը կարող են հեշտութեամբ
առողջանալ և համարեա նախկին կերպարանքն
ստանալ:

Ոմանց գեղձերը սակաւ են վնասվում, միւսնե-
րինք՝ որոնց աւշալին համակարգութիւնը տրամադիր
է լինում դիւրութեամբ հիւանդանալու, ընդհակա-
ռակը—բաւականին ուռչում են և այդպէս երկար
ժամանակ մնում:

Արդ՝ աւշալին համակարգութեան հիւանդանալը
սիֆիլիտով վարակուած լինելու նոր նշան է, որը
անգնահատելի ուղեցուց է նոյն խոկ այն ժամանակ,
երբ պինդ շանկը անհետացած է լինում:

Այդ նշանի օգնութեամբ կարող ենք որոշել
մինչև անգամ վարակման սկզբնավայրը, որովհետեւ,
ինչպէս վերևում ասացինք, աւշալին անօթներից
ու գեղձերից ամենից առաւել հիւանդանում են նը-
րանք, որոնք խոյի մօտ են գտնվում:

Պինդ շանկը առանձնայատկութիւններին ծա-
նօթանալուց յետոյ կարող ենք որոշել նրա և կա-
րող շանկը մէջ եղած զանազանութիւնը:

Պինդ շանկը երեսում է, ինչպէս յայտնի է,
վարակման ըստէից 2—3 շաբաթ յետոյ։ Դուրս է
գալիս մի հատ բշտիկ, որը միայն յետոյ է խոցոտվում։

Խոցը միշտ լինում է տափակ և մակերեսով-
թալին, պղնձագոյն տակով, կարմիր երիզով շրջա-
պատուած։

Նա արտադրում է շատ քիչ հեղուկ, որն արենածը տեսք ունի: Նրա տակն ու եղերքը պնդացած են լինում, և այդ պնդութիւնը խոցի սահմաններից չէ անցնում:

Խոցի հարեւան աւշալին գեղձերն ուռչում են և պնդանում, ուռուցքները չեն ցաւում և շատ անգամ թարախ չեն կապում:

Իսկ կակուղ շանկը խոցը, յաճախ մի քանի հատ, երեսում է արդէն 3—4 օրից յետոյ և արագութեամբ բորանում է:

Խոցի եղերքը լինում է խոռոչներով, տակը փորփըրած, մոխրագոյն և որ գլխաւորն է՝ նաև արտադրում է բաւականին թարախալին հեղուկ և ցաւոտ ու կակուղ է:

Աւռչում է յաճախ միայն մէկ գեղձ, որը թէ ցաւում է և թէ թարախուում:

Երբ կակուղ ու պինդ շանկը միասին են գոյանում, այս կէպքում վարակմանից երեք օր անցած զարգանում է կակուղ շանկը, իսկ 2—3 շաբաթից յետոյ առաջանում է կարծրութիւնը, այսինքն՝ սիֆիլիսալին վարակման նշանը:

Արդ՝ որովհետև սիֆիլիսալին շանկը վարակման ըոպէից այլքան ուշ է երեւան գալիս, և այդ արդէն իսկ ընդհանուր օրգանիզմի վարակումն է ցոյց տալիս, ուստի ապարդիւն և անօգուտ են այն նախազգուշական միջոցները, որ երբեմն գործադրում էին, այսինքն՝ կտրելը կամ ալրելը:

Այսպիսի խառն վէրքերի պատճառով երբեմն դժուար է լինում ~~որոշելի~~ թէ արդեռք հիւանդը

Հասարակ շանկը ունի, թէ սիֆիլիսալին. ուստի
հարկաւոր է լինում վեց-ութը շաբաթ սպասել, որ-
պէսզի հնար լինի նկատել, թէ հիւանդի մարմինը
դուրս կըտայ արդեօք, թէ ոչ:

Ահա թէ ի միջի այլոց ինչու համար անհրա-
ժեշտ է հիւանդանալու դէպքում դիմել անպատճառ
բժշկի օգնութեան:

¶.

Ելունդային (կոնդիլոմային) շրջան

Պինդ շանկը և աւշալին անօթների ու գեղ-
ձերի հիւանդանալը — ընդհանուր վարակման առ ա-
ջին նշանները — սիֆիլիսի սկզբնական երեսովթներն
են կազմում:

Յետագայ նշանները պատկանում են արդէն
երկրորդ տեսակին և նոյնքան վարակիչ են, որքան
և առաջին երեսովթները:

Առաջինի և երկրորդի մէջ եղած ժամանակը
կոչվում է «երկրորդ շրջան»: Այդ ժամանակամիջո-
ցում սիֆիլիսի թոյնի ազդեցութեան տակ աւշա-
լին ու արենատար անօթների մէջ կատարվում են
փոփոխութիւններ, որոնք արտայալտվում են այդ
շրջանի վերջերը զանազան ձևերով, այն է՝ ընդհա-
նուր թուլութիւն, յօգերի ու անդամների ցաւ, զըլ-
լսացաւ մանաւանդ ճակատի կողմը, տենդալին դրու-
թիւն. այս երեսովթները սաստկանում են իրիկնադէմին:

Վերջապէս կաշին առատութեամբ դուրս է տալիս, մազերն սկսում են թափուել, խոցեր են առաջ գալիս բերնում, կոկորդում, յետին անցքում և այլն:

Երկրորդ շրջանը սովորաբար տևում է չորս շաբաթից մինչև հինգ ամիս, բայց զանազան հիւանդութիւնների (հարինքի, տիֆի, տենդի և այլն) աղդեցութեան տակ նա կարող է երկարել վեց ամսից մինչև երկու տարի:

Սիֆիլիսի երկրորդ շրջանի երեսովթները զարմանալի բազմազանութիւն են ներկայացնում և կարող են երեալ սիֆիլիտիկի մարմնի բոլոր մասերում, բայց ընդհանրապէս այդ երեսովթների մէջ նկատելի է մի յայտնի կարգ. մի քանի երեսովթներ շատ են զարգանում, յաճախ՝ մարմնի որոշ մասերի վրայ, որոշ ժամանակում, ուստի մենք կարող ենք որոշել մի յայտնի տիպ. սակայն սա էլ զանազան պայմանների աղդեցութեան տակ կարող է մի քիչ կերպարանափոխուել:

Սիֆիլիսային առաջին դուրս տուած բծերն ու խոցերն երեսում են մի միայն կաշու վրայ և կոչվում են «սիֆիլիդ»:

Սիֆիլիդները հետևեալ բնորոշ յատկութիւններն ունին:

Նրանք սովորաբար լինում են զանազան տասակ, որովհետև միաժամանակ չեն դուրս տալիս:

Սկզբում վարդագոյն են լինում, ապա պղնձագոյն են գառնում և մինչև իսկ կապտագոյն:

Մատով ճնշելիս՝ սիֆիլիդի կարմրութիւնն անց-

նում է, բայց բծերը չեն անհետանում, այլ դեղա-
նաւուն, նոյն խակ շիկաւուն հետք են թողնում:

Սիֆիլիսային դուրս տուածները ոչ ցաւում են,
ոչ քոր գալիս և շրջանի ու կիսաշրջանի ձևեր ու-
նին՝ մանաւանդ հնացած կամ կրկնուած դէպքերում:

Սիֆիլիդներն ընդհանրապէս երեւում են կրծքի
երկու կողմերում, ճակատի ու ծոծրակի այն մասե-
րում, ուր մազերն են սկսվում, յետևի անցքում,
բերնում և այն:

Սիֆիլիդները որոշեալ ժամանակից յետոյ՝ ար-
տադրում են թեփուկներ, կեղևներ և խոցեր: Թե-
փուկները կենդրոնից են առաջ գալիս և երբէք չեն
ծածկում ամբողջ սիֆիլիդը, ուստի շուրջը միշտ մի
կարմիր երիգ է մնում: Իսկ կեղևիկները լինում են
կեղտագոյն և թեփուկներից աւելի խոշոր ու հաստ:

Սիֆիլիսային խոցերն ունին կլոր կամ կիսալուս-
նի ձև, ուղղաձիգ կտրած եղը, փայլուն, մոխրագոյն
տակ և շուրջը ճիշտ սահմանափակուած կարմրութիւն:

Ահա սիֆիլիդի բնորոշ նշանները, որոնք միա-
ժամանակ և յայտնի քանակութեամբ ներկայ դժուե-
լով՝ ցոյց են տալիս սիֆիլիսի գոյութիւնը:

Բազմագան սիֆիլիդները մենք վերածում ենք
չորս տիպի, այսինքն՝ բծաւոր սիֆիլիդ, խաղաւար-
տալին-(պապուլա), բշտիկալին և հանգուցաւոր, ըստ
որում այդ տեսակներից ամեն մէկը, բացի բծաւորից,
կարող է բաժանուել երկուսի՝ մանրերի և խոշորների:

Սիֆիլիսի առաջին դուրս տուածը սովորաբար
երեւում է բծաւոր սիֆիլիդի կերպարանքով:

Այս բծերը լինում են ձուածեւ և փարզագոյն,

ունին մէկ սանտիմէտր երկարութիւն, իրարից բաժան-բաժան դուրս են գալիս կողքերի վրայ, ապա կրծքի, մէջքի և թևերի ու ոտերի, զլխաւորապէս՝ սրանց ծալքերի վրայ. երեսի վրայ առհասարակ դուրս չեն գալիս:

Դուրս տալու ժամանակ թողլ մարդիկ տենդ ու զլխացաւ ին ունենում, որ իրիկնադէմին սաստկանում է:

Բծերն սկզբում որոշ սահմաններ ունին, որոնք մատով ճնշելիս անհետանում են. յէտոյ կարմրութիւնն աստիճանաբար անցնում է, մի առժամանակ դեղնում և վերջը անհետ կորչում:

Այդ դուրս տուածի ժամանակ զլխի վրայ ընդհանրապէս երևում են թարախալից, բայց արագութեամբ չորացող պղպճակներ, որոնք անցնելիս կաշու մակերևոյթի վրայ փոքրիկ սպիներ են թողնում. օրանք նոյնպէս շուտով անհետանում են:

Դոքա կոչվում են «զլխի մակերևոյթալին պըղ-պճակաւոր սիֆիլիդներ», որոնք մի քանի դէպքում կարող են տարածուել կզակի, թշերի, ճակատի վրայ և ծածկուել բազմաթիւ կեղեկիներով:

Բծաւոր սիֆիլիդը տեսում է սովորաբար 3—4 շաբաթ, բայց դեղերի ազդեցութեամբ կարող է մէկ շաբաթուայ ընթացքում անհետանալ: Սակայն չըպէտք է մոռանալ, որ արիւնը դարձեալ վարակուած է մնում:

Սիֆիլիդների միւս տեսակը՝ խաղաւարտալինը (պապուլ) յաճախ խառնվում է վերոյիշեալ տեսակի

հետ, մանաւանդ երբ հիւանդը թոյլ կաղմուածքի տէր է:

Նա դուրս է գալիս կաշու վրայ պղնձագոյն, չոր ու պինդ խոյլի տեսքով, գնդասեղի գլխի մեծութեամբ. նրա կենդրոնը շուտով ծածկվում է թեփուկներով, որոնք շուտ-շուտ փոփոխվում են:

Թեփուկները հետզհետէ թափվում են և խոյլերն անհետանում, իրանց յետևից թողնելով ընաներկալին (պիգմէնտալին) բծեր, որոնք ժամանակի ընթացքում նոյնպէս կորչում են:

Մանր խաղաւարտալին սիֆիլիդները դուրս են գալիս երեսի և մէջքի վրայ, տեռում են 3—4 ամիս, բայց դեղերի ազդեցութեամբ կարող են մէկ ամսուայ ընթացքում անհետանալ:

Խոշոր խաղաւարտալին սիֆիլիդն երեռում է տափակ կօճակի ձևով, նոյնպէս պղնձագոյն, ծածկում է համարեա ամբողջ մարմինը, բացի երեսից. Եթէ երեսն էլ է դուրս տալիս, այն ժամանակ սիրած տեղը լինում է քիթը և ճակատը-մազերի մօտ: Այդ տեսակ սիֆիլիդներն յաճախ երեռում են այն մարդկանց (օր. գարբինները, խոհարարները), երեսի վրայ, որոնք աշխատում են կրակի առաջ:

Այդ սիֆիլիդը նոյնպէս թեփոտում է և անհետանում՝ կենդրոնից սկսելով:

Թէ այս և թէ մանր խաղաւարտալին սիֆիլիդների ժամանակ աչքի ծիածանը կարող է բորբռքուել:

Խոշոր խաղաւարտալին սիֆիլիդն երբեմն դուրս է գալիս ափի ու ներքանի վրայ, տեղական պայմանների շնորհիւ նրա արտաքին ձեւը փոքր ինչ փո-

պոխվում է, ալինքն՝ սիֆիլիդն աւելի մանր է լինում, իսկ թեփուկն աւելի խոշոր:

Երբեմն այլպիսի սիֆիլիդի վերին շերտը սաստիկ հաստանում է, ափն ու ներբանը ծածկվում են խոլերով, ճեղքվում են և ցաւում:

Այս տեղերի սիֆիլիդն ամիսներ է տևում, բայց դեղերի ազգեցութեամբ շուտով անհետանում է:

Պարմնի թաց մասերում, օրինակ՝ թևի տակը, շրթունքների ու սեռական անդամների վրայ, յետելի անցքի շուրջը և մատների մէջտեղերում, նա կարող է ջրջրոտել, ծածկուել մոխրագոյն փառով և արտադրել թարախանման հեղուկ. սա կոչվում է «թաց խաղաւարտ», ցաւում է և քոր է զալիս:

Ի՞նչպէս վարակիչ է այդ հեղուկը...

Արտադրուող ուտիչ հիւթի ազգեցութեան տակ՝ այդ տեսակ խաղաւարտների վրայ կարող են ծծուկներ դուրս դալ. խաղաւարտը այն ժամանակ ստանում է ծաղկաւոր կաղամբի տեսք և կարող է սաստիկ մեծանալ:

Սիֆիլիդի հետևեալ տեսակը բշտիկալինն է (պուստուլա):

Հիւանդութեան ծանր դէպքերում նա խառնվում է բծաւոր տեսակի հետ:

Այս դէպքում կաշու վրայ գոյանում են զանազան մեծութեամբ կլոր բշտիկներ, որոնց վրայ երեւում են չոր ու կեղտոտ կեղեւներ և որոնք իրանց իտուելից թողնում են մուգ կարմիր սպիներ:

Եթէ այդ կեղեւը պոկենք, տակից կերեալ խոցոտած մակերեւովթը:

Արեմն բշտիկային սիֆիլիդի առանձնայատկութիւնն այս է. Նախ երեսում է բշտիկ, ապա բշտիկը ծածկվում է կեղևով, իսկ կեղևի տակ անպատճառինում է խոց. սրանով բշտիկային սիֆիլիդն էապէս տարբերվում է խաղաւարտալինից:

Բշտիկային սիֆիլիդն երեսում է նիհար, բարձկացաւոտ ու արբեցող մարդկանց վրայ և զանազան տեսակ է լինում:

Մի տեսակը դուրս է գալիս մէջքի, ձեռքերի վրայ և անհետանալուց յետոյ թողնում է գնդասեղի գլխի մեծութեամբ փալլուն սպի. երկրորդ տեսակն երեսում է զլլաւորապէս երեսի, ճակատի, թևերի և ոտների ծալքերի վրայ. երրորդ տեսակն ընտրում է դլուխը, յօնքերը, քթի ծակերը և մեծ ու տգեղ հետքեր է թողնում:

Եկտիմա կոչուած տեսակը խոշոր սիֆիլիդներ են, թուով 8—4 հատ, դուրս են դալիս առաւելապէս ոտերի վրայ, տեսում են 5—6 ամիս և անհետանալուց յետոյ թողնում են խոր սպիներ:

Սիֆիլիդների չորրորդ տեսակի՝ հանգուցաւորի մասին կը խօսենք յետոյ:

Դանօթանալով սիֆիլիդների համարեա բոլոր տեսակների հետ, նկատում ենք, որ այդ դուրս տուածը կարող է ունենալ բազմատեսակ և խառը պատկեր. ուստի և կրում է «բազմաձև սիֆիլիդ» անունը, թէպէտ միշտ գերիշխում է մի որև է տեսակը:

Հէնց այս յատկութեամբ առաջին դուրս տուածը տարբերվում է հետևեալներից՝ կրկնումներից:

Ամեն մի սիֆիլիդի հետևանքին նայելով, մենք

տեսնում ենք, որ ամենաթեթևը բծաւոր սիֆիլիդն է, ծանրը՝ խաղաւարտայինն է, իսկ բշտիկայինն արդէն աւելի վատ հետևանքներ է գուշակում:

Կաշու հետ միաժամանակ վնասվում են լորձաթաղանթները, կաշու աւելուածները և ներքին օրգանները:

Վնասվում է կոկորդի, քիմքի, քթի, շրթունքների, սեռական անդամների և յետին անցքի լորձաթաղանթը:

Լորձաթաղանթը նոյն կերպով է վնասվում, ինչպէս և կաշին, սակայն յայտնի տարբերութեամբ, այսինքն սիֆիլիդի հանգուցաւոր տեսակը լորձաթաղանթի վրայ չէ պատահում:

Վնասուած ժամանակ լորձաթաղանթի վրայ երեւում է թեթև ուռուցք, մուգ-կարմիր կապտախառն գոյնի: Այդ սիֆիլիդը կուրս է զալիս յաճախակի կոկորդում ու քիմքի վրայ և երբեմն ծածկուած է լինում սպիտակ բծերով, տեւում է ամիսներով, հիւանդին չէ անհանգստացնում, միայն հիւանդը բերանում մի տեսակ չորութիւն է զգում:

Խաղաւարտային սիֆիլիդն երեւում է կլոր կամ ձուաձև բծերի տեսքով, լորձաթաղանթից բարձրանում է և շրջապատվում է կարմիր նեղ ողակով:

Ճուտով այդ սիֆիլիդը բացվում է, երբ վերևի շերտն ընկնում է. տակից երեւում է պղնձագոյն մի մակերևոյթ, քիչ խոր ընկած, մանր ու արիւնահոս ծծուկներով:

Եթէ այդ կոճակաձև խոցը յաճախակի և խիստ գրգռուի, օրինակ՝ երբ հիւանդը գործածում է ծխա-

խոտ և ոգելից ըմպելիք, այն ժամանակ նա ընդունում է կեղտոտ մոխրագոյն տեսք, սկսում է թափուել, խորանալ և ցաւել:

Այդ տեսակ խոցը պարզ յատկանիշ է սիֆիլիսի համար:

Երբեմն խոցը նոյնատեսակ զրգուման ազդեցութեան տակ ծածկվում է ծծովկներով և մեծանում. նա ցաւ չէ տալիս, միայն թեթև քոր է գալիս: Կա անհետ անցնում է կամ թողնում է սպիտակ սպի. յաճախ նորից է կրկնվում:

Կաշու հետ վնասվում են մազերն ու եղունգները:

Սիֆիլիսով վարակուածի մազերը խիստ թափվում են և գլուխը ճաղատանում:

Մազերի թափուելը երկու տեսակ է լինում: Առաջին դէպքում, խոշոր սիֆիլիտներից յետոյ, կաշին կերպարանափոխվում է, մազերը տեղ-տեղ են թափվում և յետոյ կարող են չը բուօնել:

Միւս դէպքում կաշին մնում է իւր առաջուայ դիրքում, վարակման առաջին տարին կամ երկրորդ տարուայ սկզբում, երբ երկում է առաջին դուրս տուածը, մազերը տեղ-տեղ առատօրէն թափվում են, յաճախ ճաղատութիւն է դոյանում. թափվում են նոյնպէս թերթերունքները, յօնքերն ու ընչացքները (բեխերը), բայց շուտով դեղերի ազդեցութեամբ մազերը նորից բուօնում են:

Մազերի այդ տեսակ թափուելը պարզապէս ցոյց է տալիս, թէ սիֆիլիսը կրկնուել է:

Եղունգների վնասուելը նոյնպէս երկու տեսակ է լինում: Առաջին դէպքում հէնց ինքը եղունգն է

վնասվում, երկրորդ դէպքում՝ նախ եղունգի շրջապատն է վնասվում և ապա եղունգը:

Առաջին դէպքում հիւանդանում է եղունգի արմատը, և եղունգը հեշտութեամբ է կտրատվում. նրա վրայ երեսում են սպիտակ բծեր, ըստ որում վնասվում են առհասարակ բոլոր եղունգները:

Թեղերի ազդեցութեան տակ հետզհետէ արմատի կողմից նոր եղունգ է աճում և այդպիսով վնասուածի փոխարէն դուրս է դալիս առողջ եղունգ՝ 1—2 ամսուայ ընթացքում:

Երկրորդ դէպքում՝ եղունգի շուրջն երեսում է կարմիր ու խիստ ցաւոտ փոքրիկ ուռուց: Քիչ ժամանակից լետոյ այդ ուռուցն սկսում է կամ փոքրանալ, թեփոտել ու ոչնչանալ կամ թէ թարախով լցուել ու խոցոտուել:

Խոցը խորանում է, կեղտոտ ու ցաւադար դառնում, իսկ եղունգը՝ դիւրաբեկ ու դեղնաւուն:

Թեղերի ազդեցութեամբ վէրքն անցնում է եղունգի տակ և նրան շարժում է. եթէ եղունգի արմատը խոցից փչացած չէ լինում, եղունգը նորոգվում է, բայց սովորաբար անկանոն ձև է ընդունում:

Այս վերջին տեսակը յաճախ պատահում է պապուլային սիֆիլիտների ժամանակ. սովորաբար վնասվում են ոտի մատները, և վնասվում է մէկ եղունգ կամ երկուսը միասին:

Այս սկզբնական երեսոյթները նկատվում են առաջին 2—3 ամիսների ընթացքում՝ վարակման օրից սկսած, և առաջին դուրս տուածը դեղերի ազդեցու-

թեամբ, երբեմն նոյնիսկ առանց բժշկուելու, կարող է անցնել:

Հիւանդը կազդուրվում է և կարծես առողջանում է, բայց այդ առողջութիւնը ժամանակաւոր է և խարուսիկ:

Հանգամանքներին նայելով՝ հիւանդութիւնը մօտաւորապէս երեք տարի է տևում. այդ ժամանակամիջոցում երևում են երկրորդ շրջանի երևոյթների կրկնումներ, որոնք անուանվում են «ելուդային» (կօնդելօմային) և ինչպէս ասացինք, «նոյնքան վարակիչ են լինում, որքան և պինդ շանկը»:

Վերոյիշեալ բոլոր ցաւակիր փոփոխութիւնները կարող են նորից կրկնուել, բայց կրկնումները սովորաբար աւելի բազմատեսակ են լինում:

Այս դէպքում աւելի յաճախ վնասվում են աչքերը, մկաններն ու ոսկորները:

Առանձնապէս այն մարդկանց աչքերն են վնասվում, որոնք մշտապէս յոզնեցնում են իրանց տեսողութիւնը, այսինքն՝ աշակերտների, գրաշարների, արհեստական լուսով պարապողների և այլն:

Հիւանդութիւնն իւր սկիզբն առնում է աչքի ծխածանից կամ սուր կերպով՝ յանկարծ և կամ թէ կամաց-կամաց՝ խրօնիկաբար:

Առաջին դէպքում սաստիկ ցաւ է զգացվում աչքի շուրջը, որն իրիկնաղէմին սաստկանում է: Ցաւը տարածվում է նաև գլխի համապատասխան կիսամասում:

Աչքի ճերմակը կարմրում է, արցունք է թափվում, և հիւանդը չի կարողանում լոյսի նայել. եղ-

չերաժաղանթի շուրջը վարդագոյն պսակ է գոյանում, բիբր փոքր ինչ սեղմվում է, երկարում կամ եռանկիւնի է դառնում, ծիածանն ընդունում է ժանգոտ գոյն, տեսողութիւնը թուլանում է՝ մինչև անգամ ոչնչանում:

Այդ բոլոր երկոյթներն առաջանում են, երբ հիւանդը չի բժշկվում. միայն շատ սակաւ դէպքերում են իրանք իրանց անցնում:

Խրօնիկական դէպքերում այս բոլոր երկոյթներն աստիճանաբար են առաջ գալիս և աւելի թեթև կերպով, այնպէս որ հիւանդը բժշկի է դիմում՝ գանգատուելով, թէ պարզ չի տեսնում:

Առվորաբար մէկ աչքն է ցաւում, բայց հեշտութեամբ ցաւը մէկից միւսին է անցնում. կրկնութիւններն յաճախակի են պատահում:

Այս ցաւը յայտնի է «իրիտ» անունով:

Հիւանդացած աչքերը լաւանում են, բայց պէտք է յարատե ու երկար բժշկուել:

Այս հիւանդութիւնը կարող է առաւել ծանր կերպարանք ստանալ, երբ ծիածանը միանում է ոսպնեակին և բորբոքումն անցնում է աչքի խոր մասերին—արտեանունքալին մարմնին ու երակամաշկին: Այդ դէպքում նա կարող է կուրութիւն առաջ բերել:

Ելունդալին շրջանում կարող են նոյնպէս վնասուել մկաններն ու ջլիկները (ցyxօջալի՛), գլխաւորապէս ուսի երկագլուխ մկանը:

Սիֆիլիսի ազգեցութեան տակ այդ մկանը կըծկըվում է և նախաբազուկը դէպի ուսն է կարկամում:

Սովորաբար միանդամից երկու ձեռքի վրայ ևս
նկատելի է լինում այդ երեսյթը:

Բացի երկդիսանի մկանից՝ կարող են վնասուել
նաև ստորին անդամների ու պարանոցի մկանները.
այդ դէպքում առաջ է գալիս համապատասխան
այլանդակութիւն:

Հիւանդները սովորաբար գանգատվում են, թէ
այս կամ այն մկանը և կամ թէ բոլոր մկանները
ցաւում են, թոյլ են, երբեմն մկանը կծկվում է,
երբեմն ինքնաբերաբար ցնցումներ են երես, գըլ-
խաւորապէս ձեռքերում:

Երբ ջիկներն են վնասվում, երեւան են գալիս
ջրգողութիւն, ուռոց, կարմրութիւն և ցաւ։ Վնաս-
վում են առաւելապէս ձեռքի մատները շարժող ջը-
լիկները և ոտի Ախիլէսեան ջիլը։

Ոսկրներն ու ոսկրամաշկն աւելի շուտ են վը-
նասվում։

Երբեմն՝ ընդհանուր սիֆիլիսի դարդացման հէնց
սկզբում, նոյն իսկ մինչև առաջին դուրս տալը,
ընդհանուր տկարութեան հետ միասին ցաւեր են
զգացվում զանազան ոսկրներում։

Այդ ցաւերը մէկ տեղից միւս տեղն են անցնում,
ճնշման տակ սաստկանում են և յաճախակի զգալի
են լինում սրունքի, գլխի և կրծքի ոսկորներում,
սաստկանալով սովորաբար երեկոները։

Յաւող ոսկորները հետազոտելիս՝ ոչ մի առանձին
փոփոխութիւն չի նկատվում, և ցաւերն արագու-
թեամբ անցնում են ինքնաբերաբար կամ դեղերի
աղդեցութիւնից։

Սիմեոնիսի լետազայ շրջաններում ոսկորները և ոսկրաթաղանթը աւելի ծանր կերպով են վնասվում, ըստ որում նկատելի են լինում հիւանդութեան հետևանքները:

Սովորաբար վնասուած ոսկրի վրայ երեսում է մի փոքրիկ, ցաւագար ուռուց. երբեմն էլ մէկի փոխարէն երկու-երեքն են երեսում:

Ուռուցը քիչ-քիչ մեծանում է և նրա վրայի կաշին կարմրում: Գիեղերի ազդեցութեան տակ ուռուցը հեշտութեամբ ծծվում է և իւր լետևից ոչ մի հետք չէ թողնում:

Աւրիշ դէպքերում ուռուցը ոսկրանում է. նրա ծաւալը մի քիչ փոքրանում է. ուռուցը կամաց-կամաց խառնվում է ոսկրի հետ և որան տղեղացնում է (էկզամուս կամ հիպերոստաս):

Այդ ուռուցների համար մի ուրիշ ելք ևս կայ— դա թարախ կապելն է: Այդպիսի ծանր դէպքերում ցաւը սաստկանում է, ուռուցը փափկանում, ընդունում է մուգ-կարմիր գոյն և վերջապէս բացվում է:

Բացվում է թարախով լիքը մի մեծ խոռոչ, ոսկրաթաղանթը բաժանվում է ոսկրից և ինքը ոսկրը կործանման պրոցէսի մէջ է մտնում. սա սիֆիլիսային կեցաւն է:

Ուռուցը դառնում է խոց, որից երկար ժամանակ՝ մինչև խոցի առողջանալը, ոսկրի մանր կտորներ են թափվում:

Խոցը վերջապէս սպիանում է. սպին փոս ընկած և ոսկրին կպած է լինում:

Այս տեսակ աւերմունքը ոսկրամիզատապ (պի-

ըիոստիտ) է կոչվում, որովհետև վնասվում է ու-
կրաթաղանթը և ապա ոսկը:

Սիֆիլիսի սկզբում յաճախ լինում է ոսկրամի-
զապատ (պերիոստիտ), որը վերջանում է կամ ծծուե-
լով կամ ոսկրանալով:

Սիֆիլիսի աւելի ծանր դէպքերում, գլխաւորա-
պէս պուստուլային սիֆիլիդների ժամանակ, ոսկրս-
միզատապը յաճախ թարախով է լինում:

Ոսկրների աւերումը սովորաբար ներքին կողմից՝
միջուկից է սկսվում. նախ սկսում են ուռել. նորա-
կազմ հիւսուածքի պատճառով ոսկրի ծակոտիները
լայնանում են և սաստիկ ցաւեր պատճառում. վեր-
ջապէս ոստայնների մեծ մասն անհետանում է, և
ոսկրն աւելի ծակոտած է դառնում:

Ուռուցը մեծանում է, հասնում մինչև ոսկրի
մակերեսութը և որա արտաքին շերտը դուրս է հրում:

Վերջ ի վերջու այդ ուռուցը կամ ոսկրանում է,
կամ թարախ կապում և կամ ծծվում. վերջին դէպ-
քում ոսկրը փխրուն է դառնում և հեշտութեամբ
կոտրվում է ամեն մի թեթև ճնշումից:

Երբ ոսկրի ուռուցը թարախ է կապում, այդ
դէպքում կաշին կարմրում է, միանում է ուռուցքի
հետ, որը և բացվում է:

Երեսում է մի խոր խոց, որից հօսում է թարախ
և դուրս են գալիս ոսկրի մանր կտորներ: Խոցը յա-
ճախ դուրս է զցում ֆիստուլներ, որոնք երկար
ժամանակ արգելք են դառնում խոցի առողջանալուն:

Այդ աւերմունքը ոսկրատապ (օստիտ) է կոչվում,
որովհետև այստեղ իրապէս ոսկրանիւթն է վնասվում:

Ալսպիսի աւերմունքների կարող են ենթարկուել
նաև գանգի ոսկորները թէ արտաքուստ և թէ
ներքուստ:

Այդ դէպքում առաջ են գալիս զլխի սաստիկ
ցաւեր, որոնք սաստկանում են մանաւանդ իրիկնա-
դէմին և հետղիետէ մշտական են դառնում:

Գանգին դիպչելիս՝ սաստիկ ցաւ է զգացվում,
և հիւանդութիւնը, եթէ չի բուժվում, սպառնում
է առաջ բերել ցնցումներ, մտաւոր կարողութեան
կորուստ և նոյն իսկ մահ:

Միջին թօւով երեք տարուայ ընթացքում հի-
ւանդութիւնը կարող է մինչեւ հինգ անգամ կրկնուել,
բայց աստիճանաբար թուլանալով. այդ ժամանակի
ընթացքն անցնելուց յետոյ՝ հիւանդը կարող է բո-
լորովին առողջանալ. գոնէ սիֆիլիսը չի երևում ոչ
նրա և ոչ ժամանակների վրայ:

Աւելի ծանր դէպքերում հիւանդութեան կրկնու-
թիւնները յաճախ են երեսում և աւելի խոր են վը-
նասում թուլացած օրդանիզմը:

Այդ դէպքերում բծաւոր սիֆիլիսից յետոյ կա-
րող է երեալ պապուլայինը, ապա պուստուլայինը:

Վնասվում են աչքերը, մկանները, ոսկորները,
և սիֆիլիսը Յ—Յ տարուց յետոյ մտնում է արդէն
երրորդ անվարակիչ-«գումմալին» շրջանը:

Ե.

Գումային շրջան

Երրորդ շրջանը Գումմալին է կոչվում և արտայատվում է հանգուցաւոր սիֆիլիդի կերպարանքով, առաջ բերելով սիֆիլիսալին խոցոտ հարբուխ, արեան անօթների, նեարդալին համակարգութեան ու ներքին օրգանների սիֆիլիս:

Այս շրջանը, ինչպէս ասացինք, շրջապատողների համար անվարակիչ է և չի ազդում ժառանգների վրայ. միայն թէ սրանք ծնվում են թուլակագմ, լինում են կարճակեաց և ունենում են հիւանդութեան տրամադիր աւշային ու նեարդալին համակարգութիւններ, բայց յաճախ առանց սիֆիլիսալին նշանների:

Հանգուցաւոր սիֆիլիդը, որ յաճախ երրորդ շրջանումն է պատահում, ներկայացնում է մի սահմանափակ, պինդ և առանց ցաւի ուռուց ոսպի կամ մինչեւ իսկ հաւի ձուի մեծութեամբ, նայելով թէ որտեղ է գտնվում՝ կաշու մէջ, թէ կաշու տակ:

Այդ ուռուցները կամաց-կամաց մեծանում են, պղնձի բնորոշ գոյն են ստանում՝ երբ մանր են լինում և յետոյ ծծվում են կամ թարախ կապում:

Ուռուցը ծծվում է այն ժամանակ միայն, երբ հիւանդն ամուր կազմուածք է ունենում կամ բժշկվում է: Երբէք հարկաւոր չէ դանակով կտրատել այդ ուռուցները:

Հանգուցն սկսում է թեփուտել, կակղել, գորշ

դոյն ստանալ և աստիճանաբար փոքրանալով անհետանալ, իր յետևելց թողնելով բնաներկալին բիծ:

Լուծումն սկսվում է սովորաբար կենդրոնական մասից, որը կակղում է և բացվում:

Ստացվում է մի բնորոշ խոց՝ ուղիղ եղերքներով, ծածկուած մոխրագոյն փառով, որը չէ կարելի պոկել: Այդ խոցի շուրջը գտնվում են հանգուցի մնացած պինդ մասերը:

Առողջանալուց յետոյ այս տեսակ խոցերը թողնում են զանազան մեծութեան անջնջելի բծեր ու սպիներ, որոնք երբեմն այնքան խոր են լինում, որ կաշին խիստ այլանդակում են:

Հանգուցալին խոշոր սիֆիլիտներն երեւում են սովորաբար առանձին-առանձին ոտերի և գլխի վրայ, նոյնպէս և ներքին օրգանների վրայ, իսկ մանրները խմբովին, շրջաններով կամ կիսաշրջաններով՝ երեսի վրայ, առանձնապէս քլժի ծայրին և թևերի ծալքերի վրայ:

Հանգուցաւոր սիֆիլիտը սովորաբար երեւում է երկրորդ շրջանի վերջերը, բայց կարող է և 20—30 տարուց յետոյ երեւալ:

Թեղերի ազդեցութեան տակ այդ սիֆիլիտներն, ի հարկէ, կարող են և խոկի չերեւալ, բայց երբ դուրս են գալիս, սովորաբար տեւում են շատ երկար, նոյն խոկ տարիներով:

Այդ հանգուցներն անուանվում են նոյնպէս «գումմեր», որովհետեւ պարունակում են խէժանման թանձը հեղուկ:

Գումմերը կարող են կրկնուել և հատ-հատ ե-

բեալ մկանների, ոսկորների և բոլոր օրդանների մէջ,
ոչնչացնելով քիմքը, քիթը և այլն:

Երբորդ շրջանում քիթը կարող է վնասուել և
յատուեկ սիֆիլիսային հարբուխից: Այդ դէպքում հի-
ւանդները սակաւ ուշադրութիւն են դարձնում ի-
րանց քիթի գրայ, համարելով սովորական հարբուխ,
բայց միայն երկար տևող: Սակայն շուտով քիթից
սկսում է հոսել կանաչաւուն թարախալից նիւթ՝
սեւագոյն կեղևիկներով:

Քիթը հետզհետէ աւելի է փակվում. նրանից
վատ հոտ է գալիս և հիւանդը յանկարծ սկսում
է խնչել փտած ոսկը կտորներ, սովորաբար քիթի
անջրպետի ոսկըները:

Դեղերի աղղեցութեան տակ այդ պրոցէսը կարող
է կանգ առնել, և քիթն անփոփոխ մնալ, բայց
եթէ խնամքն անտես առնուի, պրոցէսն առաջ կը-
ընթանայ, քիթի ոսկորները կտկեն փտել և մանր
կտորները դուրս կթափուին: Այդ դէպքում քիթը
տափականում է, ընդունում է թամքի ձև, քիթի
մէջքի կաշին խոցոտվում է, և քիթի տեղ կարող է
մի ձուածել ծակ բացուել:

Այդ տեսակ հիւանդները բոլորովին վտանգաւոր
չեն և նրանցից խուսափելու կարիք չկայ:

Երբ թոքերն ու սիրտն են վնասվում, երեսում
են նշաններ՝ որոնք լիշեցնում են թոքախտը և
սրտի տրոփիւնը, այս դէպքում հիւանդներին սպառ-
նում է մահ, եթէ չբժշկուին:

Կարող են վնասուել նոյնպէս լեարդը, երիկա-

մունքը, փայծաղը և առաւելապէս ուղեղալին կենդրոնական համակարգութիւնը:

Վերջին դէպքում պրոցէսն սկսվում է զարկերակներից, որոնց պատերը սիֆիլիսի աղղեցութեան տակ հաստանում են և կորցնում են իրանց առաձդականութիւնը. նրանց անցքը նեղանում է կամ բոլորովին ծածկվում, իսկ ուղեղի համապատասխան մասն առանց սննդառութեան է մնում և յայտնի օրգանների դործունէութիւնը խիստ վնասվում է:

Զարկերակների պատերում կարող են երևալ գումմային մանր հանգուցներ, որոնք խոցոտում են և յետոյ սպիներ գոյացնում կամ թէ բարակացնում են զարկերակի պատերը: Այդ գումմերն արգելում են կանոնաւոր արիւնաշրջութիւնը:

Խոշոր գումմերն իրանց յետելից թողնում են մեծ սպիներ, որոնք ճնշում գործ դնելով հարեւան մասերի վրայ՝ պատճառ են դառնում նեարդային ցաւերի, անդամալուծութեան, ցնցումների, մտաւոր ընդունակութիւնների խանգարման և այլն:

Այս վերջին երեսոյթներն առաջանում են ոչ միայն ուղեղի զարկերակների վնասուելուց, այլ և ուղեղալին նիւթի հիւանդանալուց:

Անհրաժեշտ է գիտենալ, որ սիֆիլիսի ժամանակ որքան վարակվում է արիւնը, նոյնքան էլ վնասվում են անօթները:

¶.

Կանանց սիֆիլիսը

Կանանց սիֆիլիսի ընթացքը նոյնն է, ինչ որ տղամարդկանցը. եթէ և լինին մի քանի շեղումներ սիֆիլիդների ձեւի ու քանակութեան մէջ, նըրանք աննշան են և տեղական պայմաններին համապատասխան:

Օրինակ՝ լորձաթաղանթների վրայ պինդ շանկրն աւելի փափուկ է, քան թէ կաշու վրային, և նրա սահմաններն այնքան էլ որոշակի չեն, ուստի կականց մօտ սկլերոզն աւելի քիչ է լինում, որովհետեւ նա երևում է յաճախակի լորձաթաղանթի վրայ, այսինքն՝ արգանդի բերանի, հեշտոցի, փոքր շըրթունքների վրայ, իսկ մեծ շրթունքների վրայ սկլերոզը (կարծրութիւնը) կարող է ահագին մեծութեան հասնել:

Կանայք սկլերոզ իսկ կարող են չունենալ, եթէ վարակուել են ցղանալու ժամանակ, այսինքն եթէ հիւանդը մի որեւ է նշան չունի մարմնի վրայ և վարակիչ նիւթը գոյացել է նրա սերմի մէջ:

Թաց պապուներ աւելի յաճախ կանայք են ունենում, քանթէ տղամարդիկ, որովհետեւ կանանց կաշու մակերևոյթի վրայ աւելի ծալքեր կան: Կանանց մօտ թաց պապուները պատահում են մեծ շրթունքների վրայ, աճուկի ծալքում, ծծերի տակը և այլն:

Կանանց սիֆիլիսն աւելի մեծ դեր է խա-

զում լղութեան ժամանակ. այդ գէպքում լղութիւնն անկանոն ընթացք է ստանում, ունենում է պէս պէս ցաւագար շեղումներ, դլխաւորապէս նեարդալին համակարգութեան մէջ:

Երեւում են զանազան տեսակ նեարդալին ցաւեր, կնոջ սննդառութիւնը թուլանում է, առաջանում է արեան պակասութիւն, ընդհանուր տկարութիւն, և 2—6 ամսում նա վիժում է կամ թէ 7—8-դ ամսում ծնում է մեռած երեխայ:

Եթէ առողջ կնոջ ու հիւանդ տղամարդու մերձաւորութիւնից զարգանում է սիֆիլիսով հիւանդ պտուղ, այն ժամանակ վերջինս դեռ արգանդում կարող է վարակել մօրը:

Մօր վրայ այդ գէպքում արտայալտվում են երկրորդ, աւելի սակաւ երրորդ շրջանի երևոյթները. երբեմն-երբեմն, կարծես, այդպիսի կինը պատուաստվում է և անընդունակ դառնում նորից վարակուելու:

Ճատ կանալք, լղութեան միջոցին վարակուելով, իրանց մտքովն անգամ չեն անցնում, թէ հիւանդ են, և այդ անգիտակցութիւնը տխուր հետևանքների է հասցնում:

Որքան էլ մեծ լինի հօր սիֆիլիսի աղղեցութիւնը ժառանգի վրայ, այնուամենայնիւ մօր նշանակութիւնն այս գէպքում անհամեմատ աւելի կարևոր է. մի անգամ վարակուած կինը նոր և առատ աղբիւր է դառնում հիւանդութիւնը ժառանգապէս տարածելու գործում:

Սիֆիլիսով հիւանդ և չբժշկուող կանալք համարեա միշտ վիժում են: Եթէ կինը լղանում է եր-

ըորդ շրջանում, կարող է ծնել առողջ կամ հիւանդ երեխայ. ուրեմն սիֆիլիսի ազդեցութիւնը լղութեան վրայ թուլանում է տարիների ընթացքում:

Վիժման պատճառը պտղի, արգանդի, ընկերքի կամ պորտի հիւանդութիւնն է:

Դեղերի ազդեցութեան տակ այդ պատճառները չքանում են, մօր օրգանիզմն ամրապնդվում է, և յետազայ երեխաները կարող են բոլորովին առողջ ծնուել:

Է.

Ժառանգական սիֆիլիս

Սիֆիլիսը միշտ չի անցնում ժառանգներին և կանոնաւոր բժշկութեան ժամանակ կարող է անվնաս դառնալ, իսկ վայրի վերոյ կամ անհամապատասխան բժշկութեան դէպլքերում՝ նրա երեալն արգէն հաւանական է:

Հիւանդութիւնն աւելի հեշտութեամբ փոխանցնում է առաջին տարիներում, իսկ ժամանակի ընթացքում և սնդիկի ազդեցութեան տակ՝ նա աստիճանաբար թուլանում է, թէպէտ կարող է շատ երկարել:

Նոյն իսկ առողջ ծնուած երեխաները կարող են ապագայում հիւանդանալ:

Անդարման թողած սիֆիլիսը մեռցնում է պրտուղը, մօր արգանդի մէջ առաջ բերելով վիժումն, վաղաժամ ծնունդ և մեռելածին երեխայ, կամ թէ անցնում է երեխաներին, իբրև ժառանգական սիֆիլիս:

Հիւանդ օրդանիղմն առաջին իսկ կրկնութեան դէպքում սերմի միջոցով հիւանդութիւնն հաղորդում է պտղին, որը կամ մեռնում է մօր արգանդի մէջ և կամ աշխարհ է գալիս սիֆիլիսի պարզ նշան-ներով և մեռնում մի քանի ժամից կամ օրից յետոյ:

Փառանդական սիֆիլիսը նոյն դլխաւոր գծերն ունի, ինչ որ ստացականը, այսինքն՝ երկրորդ կամ երրորդ շրջանի երեսով ները:

Նորածին երեխան սովորաբար վտիտ է լինում և 2—4 ֆունտ քաշով. նրա կաշին լինում է թառամած ու ծալ-ծալ, վրան դուրս տուած զանազան մեծութեան պղպճակներով, լիքը պղտոր կամ թարախանման հեղուկով:

Այդ պղպճակները սովորաբար լինում են ներբանների ու ափերի վրայ և գոյանում են կարմիր բը-ծերից. չորանալուց յետոյ նրանք քուանում են:

Այդ դուրս տուածը կոչվում է «պիմֆիլիուս», կարող է զարգանալ դեռ մօր արգանդում կամ երեխայի կեանքի առաջին շաբաթներում և ընթանում է յաճախակի սիֆիլիսի այլ երեսով ների հետ. պղպճակները բազմանում են և վերջ ի վերջոյ երեխային սպանում:

Երբ սիֆիլիդները վաղաժամ են զարգանում, այս դէպքում երեխան են գալիս բծաւոր սիֆիլիդներ կամ խոշոր պապուլայիններ, առանձնապէս թաց պապուլներ՝ ծալքերի առատութեան պատճառով:

Լորձաթաղանթները նոյնպէս յաճախ են վարակվում, առաւելապէս քթի խոռոչում:

Այս վերջին դէպքում առաջանում է հարբուխ,

քթից հոսում է նախ մաղասային հեղուկ, ապա թարախ, որը չորանալով փռսեր է գոյացնում և այնպէս է քիթը փակում, որ երեխան դադարում է քթով շնչելուց:

Ճրթունքների վրայ երեւան են գալիս թաց պապուլներ, իսկ լեզուի վրայ՝ սպիտակ կոճակաձև բծեր (արծաթ 10 կոպէկանոցի մեծութեամբ), երեխան դժուարութեամբ է ծիծ ուտում և ուտելու ժամանակ յաճախակի թողնում է ծիծը, որ շունչ քաշէ:

Վնասվում են նոյնպէս կոկորդը, ձեռքերի և ոտերի եղունգները:

Եթէ երեխան ապրում է և մի քիչ առողջանում, այնուամենայնիւ 1—2 ամսից յետոյ ոսկորներն ու ոսկրաթաղանթը կարող են բորբոքուել և թափուել. վնասվում են գլխաւորապէս սրունքի, ոտերի և ձեռքերի ոսկորները, նոյնպէս և յօդերը:

Աւելի բարեբաստիկ պայմաններում հիւանդ երեխաներն ապրում են մէկ տարի, ապա նրանց թուի կէսը մեռնում է ծծից կտրելու ժամանակ. միայն քչերն են հասնում աւելի մեծ հասակի:

Երբ ծնողները բժշկուած են՝ հիւանդութեան հետքերն երեխայի մէջ կարող են երեւալ շատ ուշ, 12—16 տարիներից յետոյ:

Այն ժամանակ գոյանում են կաշու, ոսկորի գումմեր, քթի մէջ երեւում են խոցեր, ոսկրաթաղանթը և ոսկորները բորբոքվում են, աչքերը հիւանդանում և այլն:

Այդպիսի երեխաների ատամները բնորոշ են, այսինքն վերևի միջին երկու կտրիչները լինում են

բոլորակաձև, իրարից փոքր ինչ հեռու բուսնած, իսկ ատամի աղատ ծայրը կիսալուսնի ձևով փոս ընկած:

Այդ տեսակ ատամները կոչվում են չիւչինսօնի, անզլիացի բժշկի անուամբ, որն առաջին անգամ իմացաւ նրանց նշանակութիւնը:

Այդ տեսակ ատամներ ի միջի այլոց ունենում են ալկոհոլիկների զաւակները:

Հարկաւ երբ ծնողները կանոնաւոր կերպով բժշկուած են լինում, զաւակները կարող են այս բոլոր երեսոյթները չունենալ և կատարելապէս առողջ լինել:

Ժառանգական սիֆիլիս ունեցող երեխան կարող է վարակման աղբիւր դառնալ շրջապատողների, գլխաւորապէս ծծմօր համար, որի ծծակի վրայ սկլերոզ կերենայ:

Ուրեմն այդպիսի երեխային պէտք է կերակրէ ինքը մայրը, որի համար երեխան ոչ մի վտանգ չի սպառնում, նոյն իսկ այն դէպքում, երբ մայրը չէ արտայատել սիֆիլիսի և ոչ մի նշան:

Աւելի ուշ շրջանում, առանձնապէս գումմային շրջանում, երեխան կարող է ծնուել առանց որ և է սիֆիլիսային երեսոյթի, բայց առհասարակ կանոնաւոր զարգացման չի հասնում, նրա ոսկորների ու ներգերի աճումը շեղվում է սովորական ընթացքից. այդպիսի երեխան ներկայացնում է ֆիզիքական ու հոգեկան այլասեռման նշաններ:

Իրեւ մի սուրբ կանոն, երբէք չպէտք է մոռանալ, որ վարակման վտանգ չկայ, երբ մօր մար-

մնի վրայ հիւանդութեան նշան չի երեսում, իսկ երեխան վարակուած է կամ ընդհակառակը՝ մալրը վարակուած է, իսկ երեխան ազատ է հիւանդութեան արտաքին նշաններից:

Այդ իսկ պատճառով թէ առաջին և թէ երկրորդ դէպքում մալրն առանց վախի պէտք է կերակրէ երեխային և ոչ թէ յանձնէ ծծմալրի:

Մալրական ամենազլիսաւոր կոչումներից մէկն է՝ իր որդուն կերակրելը:

¶.

Սիֆիլիսի նշանակութիւնն ու դարմանը

Սիֆիլիսի մարդուս օրգանիզմին հասցրած ամբողջ վնասը նկարագրելուց յետոյ, կըմնայ այլ ևս ասել՝ թէ նա լինում է երկու տեսակ՝ ծանր ու թեթև:

Ծանր է կոչվում այն տեսակը, երբ գումարին շրջանն աւելի շուտ է վրայ հասնում և միեւնոյն ժամանակ հիւանդութիւնը կենդրոնանում է մեր ամենակարեւոր գործարանների մէջ:

Թեթև տեսակի ժամանակ հիւանդի նեարդերն առողջ են լինում և երեսում են կոնդիլոմային շրջանի թուլ նշաններ, բայց զանազան չարաբաստիկ պայմաններում թուլը կարող է դարձեալ փոխուել ծանր տեսակի:

Սիֆիլիսի ծանր տեսակի պատճառները պէս-պէս են, առաւելապէս նշանակութիւն ունին՝ միջին հասակը, ալկոհոլիզմը, օրգանիզմի նուազութիւնը՝

սննդի պակասութիւնից կամ ֆիզիքական ու բարուական յոգնածութիւնից, և վերջապէս՝ այն պարագան, երբ սիֆիլիսը բոյն է դնում մեր կազմուածքի ամենաթոյլ մասերում, այնպիսի տեղերում, որոնք հեշտութեամբ են գրգռվում կամ թէ աւելի գործունէութիւն ունին:

Այլ դէպքերում հիւանդութիւնն երբեմն թուլանում է, երբեմն նորից սաստկանում, երբեմն էլ գտնվում է անյայտ դրութեան մէջ՝ առանց որևէ տեսանելի երևոյթների:

Կոնդիլոմային շրջանն ընդհանրապէս տեսում է 3—5 տարի, ունի շատ կամ սակաւ որոշ սահմաններ, բայց գումմային շրջանն անսահման է. մի անգամ որ այս երրորդական շրջանն սկսուեց, սիֆիլիսը կարող է տարիներ տեսել:

Բժշկութեան իդէալն այն պիտի լինի, որ արգելէ այս գումմային շրջանի երևան գալը:

Այս իսկ պատճառով մեծապէս կարեոր է սնդիկային բժշկութիւնը՝ առաջին երեք տարիներում. բժիշկներից ոմանք հիւանդներին քսել են տալիս 200 հատ սնդիկային օծանելիք, միւսները 100 հատ շփումն և 75 ներարկումն են պատուիրում: Սակայն չափը որոշելը բժշկի գործն է, որովհետեւ իւրաքանչիւր հիւանդ՝ իր կազմուածքին նայելով՝ առանձին բժշկութիւն է պահանջում:

Գործի առաւել յաջողութեան համար հիւանդն ևս իւր կողմից պարտաւոր է տռանձին լիշտակարանի մէջ նշանակել իւր հիւանդութեան ընթացքը:

Դանօթանալով սիֆիլիսի ընդհանուր ընթացքի

Հետ՝ կարող ենք որոշել նաև այն վտանգը, որ ներկայացնում է այդ ախտը թէ հիւանդի, թէ ժառանգութեան և թէ հասարակութեան համար:

Արտաքին ծանր երևոյթներն ու ներքին ամենակարևոր օրգանների ծանրապէս վնասուելը, որոնց հետևանքն է լինում խլութիւն, կուրութիւն, ձայնի կտրում, գործարաններից մի քանիսի (կերակրափողի, ուղիղ աղիքի) անձկանալը, նեարդային ու հոգեկան խանգարումներ, նոյն իսկ մահ—ահա այս ամենը պարզ ցոյց են տալիս, թէ սիֆիլիսն ինչ նշանակութիւն ունի հիւանդի համար:

Կործանիչ ազդեցութիւն ունենալով ժառանգութեան ու կնոջ վրայ՝ սիֆիլիսը նուազեցնում է ազգաբնակութեան թիւը և նոյն իսկ պատճառ դառնում ցեղի այլասերման:

Պատճառ դառնալով բազմազան հիւանդութիւնների և առաջ բերելով հոգեպէս այլասերուած տիպեր, սիֆիլիսն ահազին վնաս է հասցնում հասարակութեանը, որովհետև այդպիսի հիւանդները պահպանվում են վերջինիս հաշուով:

Եթէ ընտանիքի անդամներից մէկը հիւանդանում է սիֆիլիսով, այն ժամանակ ամբողջ ընտանիքը պէտք է միջոցներ ձեռք առնէ՝ չվարակուելու համար, իսկ հիւանդը պարտաւոր է զգուշանալ, որ ուրիշներին չվարակէ:

Այդ միջոցներն հետևեալն են. հիւանդը չպէտք է սեռական յարաբերութիւն ունենայ առողջ անհատի հետ, չպէտք է գործադրէ ընդհանուր առարկա-

ները՝ ամաններ, շորեր, անկողին, երեսորբիչ, գործիքներ և այլն:

Վերջապէս հիւանդը պարտական է հինգ տարի բժշկուել, որ չվարակէ իւր ամռանուն ու ժառանդներին:

Այժմ ըոլորին էլ յայտնի է, թէ կարելի է սիփիլիսը բոլորովին բժշկել, միայն թէ բժշկութիւնը պէտք է կատարուի բժշկի հսկողութեամբ, և բժշկուողը պէտք է կանոնաւոր կեանք վարէ:

Բժշկուել պէտք է երկար ժամանակ, այն էլ բժշկի մօտ և ոչ թէ թեթեալի ու զանազան խաբերանների մօտ:

Սիֆիլիսի դէմ կուուելու ամենաազդու միջոցն է՝ սնդիկը, եօդը, առողջ կազմուածքը և ժառանդական հիւանդութիւնների բացակայութիւնը. բայց պակաս նշանակութիւն չունի և առողջապահութիւնը. այս վերջինն է միայն տալիս լրիւ ու կայուն առողջութիւն, որովհետեւ առանց ողջապահիկ կանոնների իրագործման սնդիկն ու եօդը յաճախ անդօր են մնում:

Ողջապահիկ կանոններ ասելով, պէտք է հասկանալ առողջ ու տաք օդ, սննդարար ու խառն կերակուր, այսինքն՝ ձու, կաթ, կարագ, միս և պտուղներ:

Մեծապէս վնասակար են ըմպելիքները—մանաւանդ՝ կոննեակ, լիկէու և օղի։ Թուլակազմ հիւանդներից մի քանիսին մինչև իսկ օդտակար է օրական մի բաժակ գարեջուր կամ գինի տալ:

Հարկաւոր է մի երկու խօսք ասել նաև ցուրտ և տաք ջրի մասին:

Առաջին երկու տարիներում կարելի է գետի կամ ծովի մէջ լողանալ, եթէ ջրի բարեխառնութիւնը 22° -ից նուազ չէ, իսկ տաք ջրում՝ միայն $28^{\circ} - 30^{\circ}$:

Հենց որ սկսվում է դլիսի կամ մէջքի ուղեղի սիֆիլիսը, նեարդային համակարգութեան հիւանդութեանը մեծապէս վտանգաւոր է 28° -ից վեր ջրի մէջ մտնել. հակառակ դէպքում՝ հիւանդներն իրանց վաղաժամ գերեզմանը կը փորեն:

Միմիայն ծծըմբաջրերը չեն կարող բուժել սիֆիլիսը: Նրանք կարող են ծառայել իբրև օժանդակիչ միջոցներ և այդ դէպքում ի հարկէ փոխվուժ է հիւանդի կենցաղավարութիւնը (թարմ օդ, խաղաղ կեանք և այլն):

Յամենայն դէպս առանց բժշկի խորհրդի երբէք չպէտք է օգտուել ծծըմբաջրերից:

Ընդհանրապէս յոդնածութիւնը՝ նամանաւանդ նեարդային դրութեան յոդնածութիւնը ծանրացնում է հիւանդութեան ընթացքը:

Պէտք չէ երբէք մոռանալ այն իմաստուն օրէնքը, թէ ամեն բանի մէջ չափաւորութիւն է հարկաւոր:

Սնդիկը մարմնի մէջ կարելի է մտցնել երեք կերպով՝ ա) իբրև դեղահատ՝ կուլ տալով, բ) շփելով և գ) ներարկելով:

Թէ այս երեքից ո՞ր տեսակը պէտք է գործադրել, այդ կախումն ունի հիւանդի հասակից, սննդառութեան ընդհանուր դրութիւնից, նեարդային համակարգութիւնից, նրա արհեստից ու ընտանեկան

կենցաղից: Ամեն մի առանձին դէպքի համար պէտք է բժշկի թուլտուութիւնն ստանալ:

Ամեն մի հիւանդ առանց քաշուելու և վախի պէտք է և կարող է դիմել բժշկի, որովհետեւ վերջինս իւր տուած երգման համեմատ պարտաւոր է գաղտնի պահել բժշկուող հիւանդների դրութիւնը:

Հիւանդը մշտապէս պէտք է բժշկուի միևնույն բժշկի մօտ, որին անպայման հաւատում է:

Հիւանդի և բժշկի մէջ պէտք է լինի բարոյական սերտ կապ:

Սնդիկից վախենալը բոլորովին անհիմն է. նա ոչ թէ հիւանդացնում է ոսկորները, այլ ընդհակառակը՝ սիֆիլիսով վնասուած ոսկորները բուժում է:

Սիֆիլիսի բժշկումը չպէտք է սահմանափակուի առաջին երեք կամ հինգ տարիներով. նա պէտք է կրկնուի ոմանց համար մի քանի անգամ ամբողջ կեանքի ընթացքում, որպէս զի կրկնումների կամ նեարդարին համակարգութեան ծանր վնասուելու առաջն առնուի:

Նեարդարին համակարգութիւնը, ինչպէս յայտնի է, երբեմն վնասվում է, չնայելով որ բժշկումը կատարուած է կանոնաւոր կերպով. այսպիսի դէպքում կողմնակի պատճառներ են դեր խաղում:

Ամեն մի սիֆիլիտիկ հիւանդութեան իւրաքանչյուր երեսովի առիթով պարտաւոր է բժշկի դիմել, առանց բնաւ ծածկելու, թէ երբ և իցէ սիֆիլիս է ունեցել:

Ամենաթեթև երեսովի ները յաճախ ապագայ ահաւոր չարիքների յայտարար են դառնում, բայց եթէ

ժամանակին միջոցներ ձեռք առնուին, ամեն ինչ
կը չքանայ առանց որևէ է հետևանքի:

Միմիայն խելացի վերաբերմունքը դէպի հիւան-
դութիւնը և կանոնաւոր բուժումը՝ բժշկի հսկողու-
թեան տակ, կարող են փրկել հիւանդին և նրան
անվնաս դարձնել թէ իւր անձի, և թէ ուրիշների
վերաբերմամբ:

Անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ՝

1. Գիշերային երազախարութիւններն երբէք
նշան չեն, թէ ժամանակ է և կամ կարեոր մեր-
ճաւորութիւն ունենալ:

2. Փուժկալութիւնը մինչև առնական արբուն-
քի զարգացումն էապէս օգուտ է տալիս աճող օր-
գանիզմին:

3. Վերձաւորութեան սկիզբը պիտի լինի մի-
միայն արբունքի հասունութեան շրջանում, այն էլ
«ի սիրոյ» կապուած ամուսնութեան մէջ:

Թէ անձնական և թէ սերնդի առողջութեան
ամենալաւագոյն զրաւականն է այս:

4. Վաղաժամ մերձաւորութիւնն աճող սերնդի
ֆիզիքական զարգացման կանոնաւորութեանն ու լրու-
թեանն է վտանգում և այդպիսով պատճառ է դառ-
նում թուլակազմ սերնդի առաջացման. այլասերման
պատճառներից մէկն էլ այդ է:

5. Այն հսկողութիւնը, որ գործադրվում է այժմ
պոռնկութեան տարածման առաջն առնելու համար
լիապէս իւր նպատակին չէ հասնում և չի խափա-
նում վեներական ախտերի և մանաւանդ սիֆիլիսի
տարածումը:

Հասարակաց տները՝ աղատ ու գաղտնի պռոնիկ-ների նման, քաղաքներում սիֆիլիսի տարածման բոյնն են կազմում:

6. Սիֆիլիսով տառապած ու կանոնաւորապէս ըթշկուած անձինք հինգ տարուց առաջ իրաւունք չունին պսակուելու, այն էլ դարձեալ բժշկի խորհրդին դիմելուց յետոյ:

Քահանաների բարոյական պարտականութիւնն է ամուսնացողներից պահանջել նաև առողջութեան վկայագիր:

7. Նախապահպանիչ միջոցներից գլխաւորներն են կոնդոմն ու լուացումը՝ ջրով կամ մէզով:

Պլոփ. Տառնովսկին լուանալու համար առաջարկում է հետևեալ դեղը՝ մէկ գրան սուլէմա, 2 կերակրի գդալ սպիրտ (*ոգի*) և կէս թէյի գդալ կիտրոնի խղզ: Առաջած հեղուկը պէտք է երկար խառնել և չքամել: Այս խառնուրդով լուանալուց 2—3 րոպէ յետոյ պէտք է տաքեկել ջրով մաքրել ու չոր սրբել և երկրորդ անգամ մերձաւորութիւն չունենալ:

Կոնդոմն ու լուացումը առհասարակ վեներական ախտերով և մասնաւորապէս սիֆիլիսով վարակուելու վտանգը նուազեցնում են:

Կոնդոմի գործածութիւնը գրգռում է նեարդալին համակարգութիւնը, սակայն այդ վնասը սիֆիլիսի կործանիչ ազդեցութեան համեմատութեամբ մեծ չէ. ուստի երկու չարիքներից առաջինը նախընտրելի է: Սակայն պէտք է չմոռանալ, որ կոնդոմը մերձաւորութեան ժամանակ կարող է պատռուել:

8. Օնանականութեան, վեներական ախտերի և սիֆիլիսի առաջն առնելու ամենազօրաւոր միջոցն է՝ սեռական գործունէութեան և սրա հետ կապուած պէս-պէս հիւանդութիւնների մասին ճիշտ ու գիտական տեղեկութիւններ տարածելը:

9. Անհրաժեշտ է նաև նպատակայարմար կրթութիւն և համապատշաճ ֆիզիքական ու բարոյական զարգացում. հակառակ դէպքում առաջանում է այլասերումն:

10. Իդէալական մարդու կարեւոր կատարելութիւններից մէկն է անձնազսպութիւնը:

Իւրաքանչիւր անհատ մատաղ հասակից պէտք է աշխատի կռուել իւր կրքերի դէմ, որպէս զի հասունանալիս կարողանայ զսպել նրանց:

Երկու խօսք եւս.

Մեծամեծ քաղաքներում սիֆիլիսով վարակուելու հարիւր դէպքից ութսունը լինում է «գաղտնի» ու «լայտնի» պունիկներից, իսկ մնացեալ քսան դէպքում սիֆիլիս ստացվում է ամուսնաւոր կանանցից, օրով բանողներից և այլ գործի տէր կանանցից, որոնք բողութեամբ իբրև արհեստով չեն պարապում:

Պետութիւնը վեներական ախտերի տարածման առաջն առնելու համար ի միջի այլոց սահմանել է հոկողութիւն անառակութեան վերայ:

Պետերբուրգում, Մոսկուայում, Վարշաւում, Յդեսայում և այլ քաղաքներում այդ հսկողութիւնը հետևեալ գրիսաւոր իշտերի վրայ է հիմնուած:

Պոռնիկ կանալք, որոնք բժշկական-ոստիկանական յանձնաժողովի հսկողութեան են ենթարկուած՝ երկու մասի են բաժանվում. 1. պոռնիկներ՝ որոնք յատկապէս պոռնկանոցներումն են բնակվում և 2. պոռնիկներ՝ որոնք առանձին բնակարաններում են ապրում:

Պոռնկանոցներում ապրողները շաբաթը երկու անգամ ենթարկվում են բժշկական քննութեան, իսկ ազատ ապրողները՝ շաբաթը մի անգամ և կամ քնաւ: Հիւանդ կանանց բժշկելու համար անմիջապէս ուղարկում են հիւանդանոց:

Բայց կան գաղտնի պոռնիկներ, որոնք խոյս են տալիս այս հսկողութիւնից. այսպէս են աղախինները, մագաղիններում, գործարաններում աշխատողները, վարձկանները և այլն:

Այսպիսիներն, իրանց անձը պոռնկութեան տալով, սովորաբար իրանց արհեստով կամ պարապմունքով ծածկում են իրանց վատ արարքը:

Այս գաղտնի պոռնկութիւնը հրապարակ հանելն ու հսկողութեան ենթարկելը բժշկական-ոստիկանական յանձնաժողովի գործակալների պարտքն է:

Բացի վերոիթշեալներից՝ ժամանակ առ ժամանակ յանկարծական քննութեան են ենթարկում կասկածաւոր վայրերը՝ ուր սովորաբար բոյն են դնում գաղտնապէս պոռնկութեամբ պարապողները, այսինքն կահաւորուած սենեակները, բաղնիքները, զարեջրատները և այլն. Հիւանդները հիւանդանոց են ուղարկվում և այնտեղից դուրս գալուց յետու պոռնիկների ցուցակի մէջ են նշանակվում:

Այս ամենն ի նկատի առնելով, ըստ երևոյթին պոռնկանոցներում ապրող պոռնիկներին այցելողներն իրանց առողջութեան վերաբերմամբ առաւել ապահով վիճակի մէջ են լինում:

Սակայն այդ ապահովութիւնն իսկապէս շատ կասկածելի է և ահա թէ ինչու.

Ճարաթն երկու անգամ պոռնիկ կնոջը քննելով, մնացեալ օրերը բոլորովին առանց քննութեան են թողնում . . .

Այն ինչ այս իսկ միջոցում կարող է երևալ կամ սիֆիլիսային առաջնական կարծրութիւնը, կամ թէ նախկին հիւանդութիւնն իբրև պապուլ վերանորոգուել. և այս իսկ միջոցին մերձաւորութեան շնորհիւ պոռնիկից վաբակուել կարող է առողջ մարդը:

Այդ պատճառով ամենեւին պէտք չէ մոռանալ՝ որ չնչին քերթուածքն անգամ վարակման բոյն է, դժբաղդաբար յաճախ լինում են սխալմունքներ, և հիւանդներն, առողջ համարուելով՝ հիւանդանոց չին ուղարկվում:

Դարձեալ բժշկական-ոստիկանական մասնաժողովի կարգադրութեամբ պոռնիկներին արգելվում է դաշտանի ժամանակ այցելուներ ընդունել. այս իսկ նպատակով նրանց տոմսակի վրայ նշանակվում է դաշտանի երևման ժամանակը:

Բայց այս արգելքը ձեռնոտու չէ ինչպէս պոռնկանոց պահողին, այնպէս էլ պոռնիկին, ուստի և սա ջրով թեթևակի մաքրուելուց յետոյ սովորաբար շարունակում է իւր պարապմունքը և այդպիսով նպաս-

տում է վեներական ախտերի ու սիֆիլիսի տարածման, որովհետև սիֆիլիսի երկրորդական շրջանում կնոջ արիւնը վարակիչ է:

Երբ պոռնիկը հիւանդութեան այս շրջանումն է՝ չնայելով որ իւր սեռական անդամների վրայ սիֆիլիսի ոչ մի նշան ցոյց չի տալիս և դաշտան ևս չունի, կարող է այնուամենայնիւ վարակել, եթէ մերձաւորութեան ժամանակ մազը մի տեղ կտրէ կամ քերթէ և արիւնն ընկնի ալր մարդու վերնամորթից զուրկ ծածկոյթի վրայ:

Եւ այսպէս ուրեմն պարզ է, որ պոռնկանոցների պոռնիկներն այսպիսի դէպքերում կարող են ամենայն հեշտութեամբ վարակել սիֆիլիսով. իսկ առանձին ապրող պոռնիկներն առաւել ևս հաւանականութեամբ:

Հարկաւ եթէ բժշկական-ոստիկանական յանձնաժողովներ չլինէին, վեներական ախտերն աւելի մեծ զօրութեամբ կը տարածուէին, քան թէ այժմ. բայց և այնպէս այդ ժողովներն իրանց նպատակին լիովին չեն հասնում, որովհետև ուշադրութիւն չի դարձվում հիմնական պատճառի, այն է պոռնիկների վարակուելու վրայ:

Պէտք է անառակ կանանց այնպիսի պայմանների մէջ դնել, որ նրանք չվարակուին. այն ժամանակ նրանք ի հարկէ չեն կարող վարակել ուրիշին. այս նպատակին կարելի է հասնել, եթէ քննութեան ենթարկուին պոռնկանոցներն այցելող ալր մարդիկ, ինչպէս որ պահանջում է պլոֆէսոր Տառնովսկին:

Ներկայ ժամանակում պոռնիկները և առհասարակ անառակութեան անձնատուր թէ այլ և թէ կին, գրեթէ միշտ վեներական ախտեր ու սիֆիլիս են ստանում:

Իսկ առանձին ապրող և մանաւանդ գաղտնապէս անառակութեամբ պարապող կանանց նկատմամբ պէտք է ասել, թէ մինչև որ բժշկական-ուստիկանական յանձնաժողովը նրանց աչքում չհամարուի իբրև մի հաստատութիւն, որ հոգս է քաշում բացառապէս նրանց առողջութեան մասին, ոչ մի ստիպողական միջոց կարող չէ կարիքն արմատից ոչնչացնել: Ամեն մի ճնշումն ու խիստ կանոն գաղտնի պոռնիկների թիւն առաւել ևս կաւելացնեն:

Անգիտութեամբ մէկին սիֆիլիսով վարակելը հարկաւ շատ ցաւալի դէպք է վարակողի համար:

Բայց գիտութեամբ առողջ մարդուն վարակելը՝ անբարոյականութեան, զարկութելի եսասիրութեան, անարգ բարքի արտայալութիւնն է կազմում:

Այսպէս ուրեմն պարզ է, թէ ինչպիսի դիւրութեամբ տարածվում է սիֆիլիսը, որ ամբողջ պետութիւններ է կործանում, ազգեր ոչնչացնում, ընտանիքներ քայքայում և արբեցութեան հետ ձեռք ձեռքի տուած՝ այլասերման հող պատրաստում:



